Կիսցէ հըրդեհն որ երջանկին, արեւուն
Դէմը նըստած, կ՚ոռնայ կ՚երթայ. Արթընցի՛ր.
Քու սիրային երազներուդ թող ժըպիտն,
Թող հանդիսի սըրահներդ.

Գըլուխըդ բաց. գետին, գետինը ծըռէ
Դողդըղացող ծունկերդ և դէմքըդ տըժգոյն.
Աշխատութեան վըրայ, բոցի, աւերի
Մէջ քու եղբայրըդ մեռաւ....

ԱԴԱ–ՆԵԳՐԻ
(Մըրիկներ)

Թրգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍԳԱՆՏԻԼԵԱՆ

## ԱՒԱՂ ԻՄ ԿԱՐՃ ԱՐԵՒՈՒՍ

Հետեւեալ ողբերգս անծանօթ չէ բազմաց. Ձեռագիր Ցաղարանեաց և Մաշտոցաց մէջ գտնուի, և կ՚աւանդուի թէ երիտասարդ եպիսկոպոս մի իրեն զբօսանաց այգի մի տնկեր սարքեր է, և հազիւ աւարտած՝ մահն ի վրայն հասնելով, այսպէս իւր զինքն ողբացեր է, և յետոյ զնոյն երգեր են շատ երիտասարդաց վրայ, երբեմն փոփոխելով տողերը, և շատ տուներ այլ աւելցընելով երգոյն, մինչեւ քսան տուն, նման իմաստներով: Այս տեղ հրատարակուածն 200 տարուան հնութեամբ Մաշտոցի միջէն է, որ կարճ միայն տասն տուն ըլլալով՝ աւելի հարազատ կ՚երեւի հեղինակին հառաչանաց չափուն, որով և աւելի ազդու և սրտաշարժ և, ո՛հ, ո՜րքան յարմար ժամանակիս իր ազգայնոց մարած ու մարմըրած կարճ արեւներուն, աւրըւած այգիներուն, յորոց Պլպուլն անգամ փախեր է, և գտուի նկարուած Ձեռագրին եզերքը՝ ողբին սկըզբանքով: Աւա՜ղ իր ձայնին և յուռթեան եւս:

Յամէն առաւօտ և լոյս՝
Պիւլպիւլն էր նստեր այգոյս.
Քաղցրիկ երգէ գոյն ըզգոյնս.
Եկին (կ՚ասեն) թ՚ Արի՛ ե՛լ յայգոյս:
Մարդի՛կ Ադամայ զարմոյս,
Ձիմ զանգատըս լսեցէք դուք.
Ի՞նչպէս ելնեմ այս այգոյս. —
Աւա՜ղ իմ կարճ արեւուս:
Քար եմ բերեր սարերուս,
Ջուր եմ բերեր ձորերուս,
Պատն իմ բոլորէր այգոյս.
Կ՚ասեն, թ՚ Արի՛ ե՛լ յայգոյս:
Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս. [1]
Կ՚ասեն, թ՚ Արե՛կ ե՛լ յայգոյս.
Աւա՜ղ իմ կարճ արեւուս:
Տունկ եմ տնկեր այս այգոյս,
Կարմիր ու խայտաակ վարդոյս.
Դեռ չեմ հոտ առեր ծաղկոյս.
Կ՚ասեն, թ՚ Արե՛կ ե՛լ յայգոյս:
Հնձան եմ շիներ այգոյս,
Կարասն եմ լըցեր գինոյս.
Դեռ չեմ խըմեր ի գինոյս,
Կ՚ասեն, թ՚ Արե՛կ ե՛լ յայգոյս:
Ղումրին երգէր այս այգոյս.
Գարուն էր հասեր այգոյս,
Ոստն արձակեալ տերեւոյս.
Կ՚ասեն, թ՚ Արե՛կ ե՛լ յայգոյս:
Եկին խընդիր այս այգոյս.
Աղէն կապեցաւ լեզուս:
Առին զհոգիս ի մարմնոյս.
Հանեցին զիս յիմ այգոյս.
Աւա՜ղ իմ կարճ արեւուս:
Վարդըն խառվէր պիւլպիւլոյս,
Ջայնըն կըտրէր ականջոյս.
Հոգիս ելաւ ի մարմնոյս.
Աւա՜ղ սասցէք գերոյս:
Տարան զիս յեզեր հողոյս.
Դըրին ի մէջ (այս) գըբոյս.
Վարդըս թառմեցաւ այգոյս.
Պիւլպիւլն վերացաւ հոգոյս:
Աւա՜ղ իմ կարճ արեւուս:

1. Այս տան երկրորդ տողն մոռցուած է օրինակին մէջ, ուրիշ օրինակաց միջէն կըրնար յարմարիլ այս, «Դեռ չեմ կերեր ի պտղոյս»:

digitised by A.R.A.R.@